ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-7-3-Ա

ք. Երևան 22.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 22-ի նիստում քննարկեց 2024 թվականի ապրիլի 26-ին Լ. Գևորգյանի կողմից ներկայացված դիմումը «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության անունով պատկերային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում դաս 34 «ծխախոտ, սիգարետներ, թութուն» ապրանքների համար 2019թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում չկան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ ներկայացված պատկերային ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.01.2019 թվականի դրությամբ բավականին լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում, այլ ներկայացված փաստաթղթերը վերաբերում են «master» ապրանքային նշանին: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ ներկայացված պատկերային ապրանքային նշանը չի կարող հանրահայտ ճանաչվել ՀՀ-ում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ դաս 34 «ծխախոտ, սիգարետներ, թութուն» ապրանքների համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 82-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում՝ 7 կողմ և 1 դեմ ձայների հարաբերակցությամբ

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պատկերային ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ